

Եկեք միասին ստեղծենք է՛լ ավելի ապահով համացանց

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ



Միսաք Մեծարենցի անվ թ 146 հիմնական դպրոց

ՄԿԱ-ի գծով տնօրենի տեղակալ

Ինֆորմատիկայի և ֆիզիկայի մասնագետ

Մարիետա Դավթյան Պավլուշայի.

Եկե՛ք սովորենք լինել ապահով և՛ կյանքում և՛ կայքում...

Յուրաքանչյուր տարվա երկրորդ ամսվա երկրորդ շաբաթվա երկրորդ օրը համարվում է Ապահով Համացանցի միջազգային օրը:

Դասը վերաբերվում է **Ապահով Համացանցին**, այն սովորական չէ, տարբերվում է սովորական դաս ստանդարտից, նպատակ ունի պարզ, հասկանալի, մատչելի լեզվով իրազեկել աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին, հյուրերին համացանցից ճիշտ օգտվելու, անվտանգ աշխատելու, զանազան վիրուսներից խուսափելու, վիրտուալ աշխարհում խակերների թակարդները չընկնելու և անսխալ ուղղորդումներ ստանալու հնարավորությունները, սովորեցնել յուրացնել համացանցի առավելություններն ու թերությունները, տարբերակել սոց. ցանցերի բացասական ազդեցությունները դեռահասների վարքագծի վրա, սերտելու համացանցի անվտանգության ոսկե կանոնները: Ծնողը իրազեկվելով համացանցի անվտանգության կանոններին, ավելի ճիշտ ձևով կփոխանցի իր գիտելիքները սեփական երեխաներին՝ տալով նրանց անհրաժեշտ համակարգչային գիտելիքներ, առանց որի այսօր վտագավոր է համացանցում պահպանել մասնավոր կյանքի անվտանգությունը, հաստատուն և վստահ օգտվել համացանցային միջոցներից:

Դասի նպատակը՝ համակարգված գիտելիքների տրամադրումն է համացանցի ապահով և արդյունավետ օգտագործման մասին:

Դասն ընթանում է՝


- նոր մեթոդների կիրառմամբ
- կենդանի խաղով
- միջառարկայական կապերի ներկայացմամբ
- համակարգչային մի քանի ծրագրերով ներկայացված տեսանյութերով
- պաստառներ
- Ապահով համացանցին վերաբերվող գործնական աշխատանքներ:

-Դասը վարում են բարձր՝ 9 դասարանի աշակերտները, սկսվում է հարցազրույցով:

-Անհնարին է պատկերացնել արդի ժամանակաշրջանը առանց տեղեկատվական-

հաղորդակցական տեխնոլոգիաների: Հաշվի առնելով համացանցի անսահման պաշարները՝ յուրաքանչյուր օր համալրվող տեղեկատվության ծավալը, չենք կարող անտեսել նրա ազդեցությունը դպրոցականների աշխարհայացքի, որոշումների և վարքագծի ձևավորման վրա: Այդ տեղեկատվական դաշտը իր վրա է վերցրել մշակույթի փոխանցման և քաղաքակրթության զարգացման առյուծի բաժինը: Հետևաբար սովորողներին տեղեկատվական քաղաքակրթության պայմաններում ճիշտ կրթելու և դաստիարակելու գործում համացանցն ունի իր ուրույն տեղն ու դերը որպես ուսումնառության և ազատ ժամանցի կազմակերպման համապիտանի գործիք, տեղեկատվության աղբյուր ու հաղորդակցության հարմար միջավայր:

Որքան էլ մենք փորձում ենք խուսափել համացանցի վտանգներից, նրանք առկա են և դրանց ազդեցությունը կարող է վտանգել երեխաների հոգեբանությանը ու սխալ աշխարհայացք ձևակերպել նրանց մոտ:



Աշխարհի բնակչության մոտ 40 տոկոսը՝ ավելի քան 3.1 մլրդ մարդ միացել է համացանցին: Հայաստանի բնակչության արդեն կեսից ավելին մոտ՝ 1,7 մլն մարդ միացել է համացանցին :

Այժմ բոլորին մոտեցնում ենք **զամբյուղ**, որտեղ կլինեն 3 տիպի առարկաներ՝ **բանալի**, **կողպեք** և **դուռ**: Ընտրեք, որը կցանկանաք:

Այն աշակերտերը, որոնք ընտրեցին բանալի՝ տեղավորվեն առաջին շարքում, կողպեքները՝ երկրորդ, դռները՝ երրորդ:

Առաջին բանալի – գաղտնաբառ

կողպեք – ծածկագրերի 80 տոկոսը պարզ են:

Լավ կլինի դրանք պարունակեն 7-12 սիմվոլ: 5 սիմվոլից բաղկացած ծածկագիրը հնարավոր է բացել 2-4 ժամում, իսկ 7 սիմվոլից բաղկացած ծածկագիրը՝ 2-4 տարում:

դուռ – լավ կլինի օգտագործել տարբեր ռեգիստրների տառեր, թվեր, նշաններ:

Երկրորդ բանալի – էլեկտրոնային փոստ

կողպեք – կարևոր ինֆորմացիա պետք չէ ուղարկել էլեկտրոնային փոստով:

Լավ կլինի տեղադրել արգելք էլ. փոստը բացելու վրա, քանի որ շատ վիրուսներ գտնվում են ներդրված ֆայլերի վրա: Նամակներին կպած ֆայլերը պետք չէ բացել, եթե չգիտես թե ումից է ուղարկված և ինչ է պարունակում: Ոչնչացնել բոլոր կասկածելի ֆայլերը:

դուռ - ոչ ոքի չվստահել անձնական փոստի ծածկագիրը:

Երրորդ բանալի – սոց.ցանցեր

կողպեք – կարևոր է տարիքը: Որոշ երկրներում արգելվում է 13 տարեկանից ցածր երեխաներին օգտվելու սոց.ցանցերից: Խուսափել անձանոթ մարդկանց հետ ընկերանալուն: Չվստահել հյուրեղ առաջարկների:

դուռ - ոչ ոքի չվստահել սոց.ցանցերի ծածկագրերը:

Չորրորդ բանալի – վիրուս

կողպեք – Համակարգչային վիրուսը ծրագիր է, որը կարող է ինքն իրեն պատճենել և տարածվել՝ վարակելով համակարգիչն առանց օգտագործողի թույլտվության կամ իմացության: Այսօր ամենատարածված վիրուսների խումբը՝ մակրովիրուսներն են, որոնք վարակում են ոչ թե ծրագրերը, այլ Microsoft Office ընտանիքի ծրագրերով ստեղծված



փաստաթղթերը: Վիրուսները համակարգիչ կարող են ներխուժել սկավառակների հետ կամ էլեկտրոնային փոստի հաղորդագրության հետ:

դուռ - Որպեսզի չդառնալ վիրուսների զոհը, ամեն մի օգտագործող պետք է իմանա համակարգչային վիրուսներից պաշտպանվելու սկզբունքները, քանի որ վիրուսները վերջնականապես ոչնչացնելու ոչ մի հույս չկա: Հին ժամանակներից հայտնի է, որ ցանակացած թույնի համար ուշ թե շուտ կգտնվի նրա հակաթույնը: Համակարգչային աշխարհում այդ հակաթույնները կոչվում են հակավիրուսներ:

Վնասակար, ապօրինի և ոչ պատշաճ բովանդակության դեմ պայքարի միջոցների և գործիքների ներկայացում /բեմադրություն/ - **սոց.ցանցեր:**

Սովորենք լինել ապահով և՛ կյանքում և՛ կայքում...

Աղջիկը նստած համակարգչի առջև խաղում է, երաժշտություն լսում և մինևույն ժամանակ հաղորդագրություններ գրում սոց. ցանցում: Հանկարծ նկատում է՝

- Այս ի՛նչ հաղորդագրություն է - բացականչում է նա:

“Արի հանդիպենք, ես քեզ կփոխանցեմ այն,ինչ դու երկար տարիներ է երագում ես...”

- Հավատա՞մ թե ոչ:

-Այնուամենայնիվ ես կգնա՛մ ժամադրության,բայց հսկանալով, որ այն կարող է վտանգավոր լինել ես կդիմեմ **ՈՍՏԻԿԱՆԻ...**

Պարզվում է հաղորդագրությունը գրել է հանցավոր խմբի մի անդամ՝ ներկայանալով որպես հասակակից,այնինչ նա մեծահասակ է և զբաղվում է երեխաներին ստիպողաբար, ճնշմամբ,վախեցնելով զանազան հանցանքների մեջ ներգրավելու հանցավոր գործով:

Շնորհիվ ոստիկանների պրոֆեսիոնալ աշխատանքների երեխան փրկվեց և հանցավոր խումբը վնասազերծվեց:

-Ինչպես քայլել համացանցում,որպեսզի ապահովված լինի մասնավոր կյանքի պաշտպանությունը՝ չէ՞ որ այնտեղ չկան **ՈՍՏԻԿԱՆՆԵՐ:**

Հայաստանի Հանրապետությունում կան օրենքներ,որոնց օգնությամբ մենք պաշտպանվում ենք համակարգչային չարագործներից՝

ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ գլուխը պատիժ է սահմանում այն բոլոր տեսակի հանցագործությունների համար, որոնցով կարող է վտանգվել տեղեկատվական համակարգերի անվտանգությունը:

Գոյություն ունեն ապահով համացանցի Ոսկե կանոններ, որոնք էլ հանդիսանում են համացանցի անվտանգության ապահովման խթանիչները:

- ✓ Ժամանակակից տեղեկատվական միջավայր ամեն վայրկյան համալրվում է ինչպես օգտակար և համակարգված, այնպես էլ մեծ քանակով չհամակարգված և չճշգրտված ինֆորմացիայով:
- ✓ Անհրաժեշտ և օգտակար ինֆորմացիա փնտրելիս նարավոր է առնչվել ագրեսիա, տեռորիզմ, և այլ չվերահսկվող և անցանկալի կոնտենտ պարունակող կայքերի, ֆայլերի և նկարների:
- ✓ Անիմաստ է հրաժարվել տեղեկատվական տեխնոլոգիաների բարիքներից, բայց միննույն ժամանակ անխուսափելի չէ երեխաների անվերահսկելի մուտքը համացանց, որը կարող է հանգեցնել
 - *երեխայի արժեքային համակարգի սխալ ձևավորմանը,*
 - *երեխայի մտավոր, ֆիզիկական և հոգեկան ոչ նորմալ զարգացմանը,*
 - *համակարգչային կախվածության և դրանից բխող հետևանքների,*
 - *համակարգչային սարքերի խափանմանը:*

Ի՞նչ է համացանցը :

— Շատերն են փորձում պատասխանել այդ հարցին, օգտվելով համանման և տարածված արտահայտությունից՝ «Համաշխարհային (գլոբալ) սարդոստայն» և դա իրականում ամեննին էլ բանաստեղծական այլաբանություն չէ, պարզապես WWW հապավման (World Wide Web) մեկնաբանությունն է: WWW էջերը հիպերտեքստային փաստաթղթեր են: Մեկ ընդհանուր թեմա ներկայացնող, միանման ձևավորում ունեցող և նույն վեբ սպասասարքում տեղակայված վեբ էջերը կազմում են վեբ-կայք: Վեբ էջերը կարելի է «կարդալ» այդ նպատակներին ծառայող հատուկ ծրագրի՝ բրաուզերի օգնությամբ: Համացանցն անսպառ տեղեկատվության աղբյուր է.

— Մեզանից շատերի համար համացանցը հսկայածավալ տեղեկատվություն պարունակող պաշար է: Այդ տեղեկույթի բնույթը և որակը խիստ տարբեր են, և միայն մենք ենք որոշում օգտագործել համացանցն ի օգուտ, թե ի վնաս մեզ:

Որպեսզի տեղեկատվություն փոխանակելիս համացանցին միացված համակարգիչներն միմյանց գտնեն և ճանաչեն դրանցից յուրաքանչյուրին տրվում է անհատական հասցե: Համակարգչային սարքի անհատական հասցեն կոչվում է IP հասցե (Internet Protocol Address-համացանցի հաղորդակարգի հասցե):

— Այն իրենից ներկայացնում է կետերով իրարից անջատված 4 թվերի համախումբ, որոնցից յուրաքանչյուրը փոխվում է 0-ից 255 տիրույթում: Քանի որ թվերով կազված նման հասցեն դժվար է հիշել Համացանցում նաև URL (Uniform Resource locctor ռեսուրսների

ունիվերսալ որոշիչ) հասցեներ են օգտագործվում: Այստեղ հասցեի կազմավորման հիմքում ընկած է համացանցին միացված յուրաքանչյուր համակարգչի համար եզակի դոմենային անվանումը, որը կազմվում է պայմանանշաններով, իսկ համակարգչի դոմենային անվանումից դրա IP թվային հասցեի ձևավորումը կատարվում է ավտոմատ անունների դոմենային համակարգի միջոցով:

Համացանցի ամենատարածված ու նշանակալից ծառայությունը էլեկտրոնային փոստն է՝ EMail: Վերջինս հնարավորություն է տալիս վայրկենապես նամակ, նկար կամ շտրիհակալական բացիկ ուղարկել դեպի աշխարհի ցանկացած վայրը:

Համացանցում պահպանվող հսկայածավալ էլեկտրոնային փաստաթղթերը յուրաքանչյուրին հասու դարձնելու համար հատուկ ծրագրեր, այսպես կոչված բրաուզերներ կան: Սրանք հնարավորություն են տալիս կայքեր բացելու, հայտեր ձևակերպել, իսկ հայցված կայքը ստանալուց հետո ապահովում են դրանից օգտվելը: Ներկայումս առավել հաճախ կիրառվում են Mozilla Firefox, Opera, Google Chrome և Internet Explorer բրաուզերները:

Շատ կարևոր է ծնողների դերը երեխաների զարգացման գործում: Մեզանից շատերի համար համացանցը /տեսաֆիլմ/

- **հաղորդակցում, շփում է**

Ինչ-որ մեկը գերված է հասարակական ցանցերով և փորձում է ձեռք բերել համախոհներ, գտնել համադասարանցիներին և ամենակարևորն այն է, որ համացանցը օժանդակում է, որ մարդիկ հնարավորություն ունենան շփվելու անկախ երկրագնդի ցանկացած վայրում գտնվելու իրողությունից:

- **ժամանց է. լսել երաժշտություն, դիտել կինոնկարներ, խաղալ խաղեր**

- **ինքնակրթություն է**

- **ինքնաարտահայտման, ինքնազարգացման անձնական ընդունակությունների աճի դրսևորման հնարավորություն է**

- **գնումներ, կամ վճարումներ իրականացնելու վայր; գումար վաստակելու միջոց:**

Ծնողների և դասավանդողների կողմից ինչ միջոցառումներ են պահանջվում.

- համացանցի առավելությունների ու թերությունների ներկայացում,
- դեռահասի արժեհամակարգի, դիրքորոշումների և վարքագծի վրա համացանցի ազդեցության հետազոտության արդյունքների ներկայացում և մեկնաբանում,
- համացանցային անվտանգության կանոնների ուսուցանում:



Մեր սիրելի՛ ծնողներ,
 Թե գավակիդ միշտ խոնարհ,
 Օգնես, կրթես, հասկանաս,
 Ինքդ պետք է նախ սերտես
 Կանոնները բավարար:
 Համացանցը մեր բարի
 Մինչ ժամանցի վայր լինելը,
 Ունի բազում գաղտնիքներ,
 Պետք է լինել լուրջ, խոհեմ,
 Չվստահել ոչ ոքի,
 Չարձագանքել ոչ մի ստի:

Հնարավորության դեպքում պետք է նստել երեխաների կողքին, երբ նրանք նավարկում են
 համացանցում: Դա լավագույն ձևն է քննարկելու եւ վստահություն նվաճելու համար:

Միասին սովորելը անհրաժեշտ է դարձնել նպատակ

Բեմադրություն

Վիրուս և հակավիրուս

Փոքրիկ տղան նստած համկարգչի առջև խաղ է խաղում, մի քիչ հոգնում և սկսում երաժշտություն լսել: Պատեհ, թե անպատեհ առանց հետազոտելու խաղը նա բազմաթիվ նոր խաղեր է բեռնում իր համակարգչի մեջ և անընդհատ բացում անհասկանալի հիպերհղումներ: Հանկարծ նկատում է, որ համակարգչային ծրագրերը սկսում են դանդաղել, երաժշտության ձայնը կտրտվում է, մկնիկը չի ենթարկվում և համակարգչի ցուցարկիչը անհասկանալի թրթռում է: Դպրոցական տղան վախեցած վեր է թռչում և բացականչում, որ իր համակարգիչը հիվանդացել է: Նրա տագնապալի բացականչությունը լսում է հրեշտակը և մոտենում տղային: Տեսնելով համակարգչի անմխիթար վիճակը մաքրում է տղայի արցունքները և հորդորում նրան չանհանգստանալ: Ինչպես հիվանդությանը կա բուժում, այնպես էլ համակարգչի խափանմանը կա վարական գնում: Ընդհամենը պետք է մաքրել համակարգիչը վիրուսից և տեղադրել հակավիրուսային ծրագիր: Դպրոցական տղան ուրախությունից թռչկոտում է հասկանալով, որ կարող է նորից կարող է խաղալ իր սիրելի խաղերը: Անվտանգության ի՞նչ կանոններ պետք է պահպանել համացանցից օգտվելիս:

Այսպիսով, որպեսզի հիշենք և օգտվենք ապահով համացանցի **ՈՍԿԵ կանոններից**՝ ևս մեկ անգամ կրկնելով բարձրաձայնում ենք.

I կանոն- Եկե՛ք չաղավաղենք մեր մայրենի լեզուն համացանցում:

II կանոն- Չօգտագործե՛նք լատինատառ հայերեն:

III կանոն –Չվիրավորե՛նք դարերից եկած, արյան գնով ձեռք բերված հայոց գիրը:

IV կանոն –Լինենք քաղաքակիրթ համացանցում:

V կանոն –Օգտագործեք գաղտնաբառեր, որոնք կպարունակեն և՛ թվեր, և՛ տառեր, և՛ սիմվոլներ:

VI կանոն- Համակարգչի հետ աշխատանքը կանոնակարգեք:

VII կանոն -Օգտագործեք լիցենզիոն ծրագրեր, հակավիրուսային ծրագրեր, որոնք էլ ժամանակին թարմացրեք:

VIII կանոն- Մի պահպանեք Ձեր գաղտնաբառը այն համակարգիչների վրա, որոնցից շատ մարդիկ են օգտվում: Գաղտնի ինֆորմացիան մի պահպանեք ուսումնական կենտրոններում, աշխատավայրի համակարգիչներում:

IX կանոն -Միայնակ մի' հանդիպեք այն մարդկանց հետ, ում հետ, որ ծանոթացել եք ինտերնետով:

X կանոն -Մի բացեք անձանոթներից ստացված ֆայլերը:

XI կանոն- Հաղորդակցվելիս պահպանեք ցանցից օգտվելու էթիկայի կանոնները:

XII կանոն- Վեր-տեսախցիկը օգտագործելիս հետևեք, որ օտար մարդիկ չտեսնեն, կամ չլսեն այն, քանի որ կարող են ձայնագրել և օգտագործել տարբեր նպատակներով:

XIII կանոն -Ցանկալի չէ անձնական ինֆորմացիան տեղադրել համացանցում:

XIV կանոն -Չպատասխանել էլեկտրոնային փոստով եկող անձանոթ նամակներին:

XV կանոն -Եթե դուք հրապարակում եք Ձեր նամակները կամ տեսաֆիլմը-հիշեք, որ այն կարող է օգտագործել յուրաքանչյուր ոք իր նպատակների համար:

XVI կանոն-Անձանոթների հետ ընկերություն մի հաստատեք սոցիալական կայքերում: